Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● էլ.հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Պատասխանատվության դրսևորումը Հրանտ Մաթևոսյանի «Հացը» պատմվածքում:
Ուսուցչի տվյալներ ● Անուն, ազգանուն, հայրանուն ● Մասնագիտություն ● Հեռախոս ● էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Գայանե Բաբլոյան Ռոմիկի Ուսուցիչ +37498870929 babloyand@mail.ru Մայրենի, Հայոց լեզու, գրականություն 5, 6, 9

Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	Ստեփան Զորյանի անվ.56 հիմնական դպրոց (010)27-20-70 school56@schools.am yerevan_school56@mail.ru https://yerevan56.schoolsite.am/

Բովանդակություն

Ներածություն **3**

Հիմնական բովանդակություն **8**

Եզրակացություններ, առաջարկություններ **18**

Օգտագործված գրականության ցանկ **19**

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	**Ներածություն** Հրանտ Մաթևոսյան գրողը նոր էր հայ գրականության պատմության մեջ:Նոր էր նաև Մաթևոսյանի ոճը: Մաթևոսյանը բարդ է, ինքնատիպ, ունի զարմանալի ոճ: Նրա արձակում գյուղն է, որտեղ անցկացրել է իր պատանեկությունը և որտեղ ապրել են նրա հարազատները: Նրա գրականության մեջ թևածում է հոգատար հայրական վերաբերմունքը կյանքի և մարդկանց հանդեպ, անհանգստությունը ամենինչի և ամենքի հանդեպ: Գրողի ստեղծագործություններում առաջնային արժեքը մարդն է, գրել է. «Մարդ ու անասուն իրարից ջոկվում են հիշողությամբ: Հիշողությունը դրած է անասունի և մարդու արանքում: Հիշողության մեջ ես, ուրեմն վառվում ես, մարդ ես հաշիվներ ունես, անհանգիստ ես և հիշողության մեջ չես հենց բաց դաշտում կովն արածում է առանց հիշողությունների իսկ հորթին երեկ են մորթել»: Դուրս էր եկել գյուղական կյանքից, բայց շարունակում էր անհագուրդ կերպով գրել գյուղի մասին: Այս առիթով մի օր ասել է. Մի անգամ ես արդեն մի կողմ եմ դրել երևի թե միակ պատմվածքս քաղաքի կյանքի մասին ու նույն երեկոյան սկսել եմ ակնարկ գրել իմ գյուղի մասին: Դա տեղի ունեցավ անակնկալ, և նույնքան անակնկալ ես բացահայտեցի, որ այն կյանքը, որի մասին ուզում էի պատմել մի ակնարկով, այդ կյանքն արժանի է, որ իր մասին գրես ամբողջ կյանքում: Քաղաքի մասին պատմելը հետաքրքիր է, չէ որ իմ կյանքն ու հազարավոր այլ ճակատագրեր ձևավորում են

ժամանակակից Երևանը, բայց այնքան քիչ է ասված գյուղի մասին: Չի ասել Տոլստոյը, չի ասել Շոլոխովը: Ասենք, խոպանի մասին Շոլոխովը լավ է գրել, նա եղել է այդ իրադարձությունների ականատեսն ու մասնակիցը, բայց նա չի նկատել՝ ինչ ողբերգականորեն են սկսում միմյանց հետ վիճել աշխատանքն ու մարդը: Մինչդեռ երեկ նրանք բարեկամ էին»: Մաթևոսյանը «գյուղագիր» է, նրա ուշադրության կենտրոնում գյուղացին է, ով իր ամենօրյա չարքաշ աշխատանքով կռիվ տալով բնության հետ, վաստակում էր իր օրվա հացը: Գյուղացու առաջ ժամանակի պահանջն էր դրվել, անմարդկային դժվարություններ, բայց նա շարունակում էր գոյատևել: Ըստ Մաթևոսյանի գյուղացու կյանքում պետք է վերադարձնել հարգանքը ինքն իր նկատմամբ, իր աշխատանքի: Փոխել աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը: Նույնիսկ եթե այդ աշխատանքը ոչ միշտ է արագ արդյունքներ բերում ու իզուր վատնվում է ժամանակդ: Միևնույն է, ինչ-որ բան մնում է: Մնում ես դու՝ գյուղի հիանալի աշխատավոր: Պետք է աշխատել, իսկ աշխատանքը քեզ կհատուցի: Մարդուն կփրկի միայն աշխատանքը, միայն գործը: Բահը ձեռքին աշխատանքը: Այլապես ոչինչ չի լինի: Դժվար հաց է պետք:

Մաթեւոսյանը, իր ստեղծագործություններում բացահայտելով գյուղի կյանքի դժվարություններն ու յուրահատկությունները, առանձնակի հետևողականությամբ էր խոսում աշխատանքի մասին: Կյանքը գյուղում դժվար է, ծանր են կեցության առաջադրած խնդիրները և նույնքան բարդ են մարդկային ճակատագրերը:

	Մաթևոսյանի յուրաքանչյուր հերոս ամուր կապված է իր հողին ու լեռներին: Անբացատրելի էր ջերմությունը այդ հարազատ աշխարհի նկատմամբ: Միջավայրից նույնիսկ կարճատև բացակայությունը հերոսներին ստիպում էր զգալ սաստիկ կարոտի ցավը: Նա հերոսներ չի փնտրում, չի հորինում նրանց, այլ տեսնում է կյանքի սովորական ընթացքի մեջ: ***Հարց*** ՝ Ի՞նչ մեթոդներով և հնարներով կարելի է սովորողների մեջ ձևավորել պատասխանատվության զգացում: ***Նպատակը***՝ Պատասխանատվության զգացումը, թերևս, մարդկային բարձր արժանիքներից մեկն է: Հետազոտության նպատակը տարբեր մեթոդների և հնարների միջոցով ձևավորել պատասխանատվության զգացումը: Մաթևոսյանի «Հացը» պատմվածքը ուսումնասիրելով՝ սովորողը ուսուցչի օգնությամբ կկարողանա թվարկել ու բացատրել պատասխանատվության աղբյուրներն ու տեսակները, կհասկանա պատասխանատու լինելու օգուտներն ու վնասները, կտարբերակի սեփական կամքով մեզ վրա վերցրած և ուրիշների կողմից մեզ վրա դրվող պատասխանատվությունը, կարժևորի պատասխանատվության դերը հասարակության մեջ և սեփական կյանքում:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	• ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	6–րդ դասարան, 29 աշակերտ՝ 17 տղա և 12 աղջիկ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	**Մեթոդներ և հնարներ** Հետազոտական աշխատանքում օգտագործված մեթոդը **դիտումն** է: Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան: Առաջին՝ հաճախ ուսուցիչները բավարարվում են մեկ օրինակ բերելով, քանզի մեկից ավելի օրինակներով նյութն ավելի հասանելի կլինի մեծ թվով աշակերտների: Երկրորդ՝ շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա, կամ ներառված են խնդրի լուծման որոշ քայլեր: Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս: **Մետաիմացություն Ուսուցման գործընթացում** շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Այս երևույթը կոչվում է մետաիմացություն: Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը: Ելնելով հետազոտության մեր նպատակից ահա այն 3 հարցերը, որը պետք է տա յուրաքանչյուր սովորող.

	1. Ի՞նչ է պատասխանատվությունը 2. Ի՞նչու պետք է լինել պատասխանատու 3. Ի՞նչպես զարգացնել պատասխանատվության զգացումը ***Սովորածը պարզելու հնար*** ***Ֆրայերի մոդել*** Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրել օրինակներ, որոնք վերաբերում են այդ հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	04.09 –19.09 2023թ.

Հիմնական բովանդակություն

Պարագրաֆներ

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **Պարտադիր է կատարել հղում աղբյուրին**	**§1 Ինչ է պատասխանատվությունը**: Պատասխանատվությունը վստահելի և արժանահավատ լինելու դրսևորումներից է: Այն մարդուն կապում է իր պարտականություններին: Պատասխանատվության զգացում ունենալ նշանակում է հոգալ այլ մարդկանց ու շրջակա միջավայրի մասին: Նաև նշանակում է լինել խիզախ, քաջ և ունենալ ինքնատիրապետման զգացողություն: Մարդը պատասխանատու չի ծնվում, դառնում է այդպիսին: Այդ զգացումը ձևավորվում և զարգանում է ժամանակի ընթացքում: Շատերը չեն գիտակցում, որ իրենք են ընտրում իրենց վարքագիծը, որ ուրիշները չեն անում դա իրենց փոխարեն: Անկախ գիտակցելու կամ համաձայն լինելու փաստից՝ յուրաքանչյուրն ինքն է պատասխանատու այն ամենի համար, ինչ մտածում, ասում կամ անում է: Պատասխանատվությունը որոշակի բան անելու կամ չանելու պարտավորությունն է, հանձնարարություն կամ խոստում՝ համապատասխան հետևանքներով: Օրինակ՝ նախքան ընկերների հետ խաղալը պետք է դասերը պատրաստել, ծնողների աշխատանքային գործիքին առանց նրանց թույլտվության ձեռք չտալ: Որպեսզի այս ամենը դառնա շոշափելի իրականություն երեխային առաջարկում ենք պատմել իր ընտանիքի, ընկերների հետ փոխհարաբերություններում ինչ տեղ է գրավում պատասխանատվությունը և արդյո՞ք երբ մի

	անձ մեկ ուրիշի խոստանում է ինչ-որ բան, ապա նա պարտավորություն է ստանձնում կատարելու խոստումը: Պատասխանատվության զգացում ունեցող մարդիկ հուսալի են: Նրանք բարեխղճորեն են կատարում իրենց տրված հանձնարարությունները և դրանք ավարտին են հասցնում ճիշտ ժամանակին: Պատասխանատվության զգացում կարելի է զարգացնել անգամ շատ փոքր տարիքի երեխաների մեջ, ովքեր դեռևս շատ բաներ չեն կարողանում անել: Երեխաների դաստիարակության մասին մի գրքում ասվում է. «Մինչև 15 ամսականը երեխան արդեն կարողանում է անել ծնողների ասածները, իսկ մոտ 18 ամսականում նրա մեջ արդեն նկատվում է զանազան բաների մեջ ինքնակամ ներգրավվելու ձգտում: Շատ մշակույթներում ծնողները սկսում են խթանել երեխաների օգտակար լինելու հակումը հատկապես հինգից յոթ տարեկանում, և անգամ այդքան փոքր տարիքում վերջիններս կարողանում են բավականին լավ կատարել տարբեր տնային գործեր» (Parenting Without Borders) /Ծնողավարություն առանց սահմանների/ **Ինչպե՞ս զարգացնել երեխայի պատասխանատվությունը** Տնային գործեր հանձնարարել և հետևել կարարմանը: Աստվածաշնչյան սահմանում կա «Ամեն տեսակ աշխատանքից օգուտ կա» (Առակներ 14:23): Երեխաները սովորաբար հաճույքով են ինչ-որ բան անում իրենց ծնողների հետ: Այդ բնական

	հակումը լավագույնս օգտագործելով՝ տարբեր տնային գործեր հանձնարարեք նրանց: Որոշ ծնողներ վարանում են այդպես վարվել: Նրանք մտածում են, որ իրենց դպրոցահասակ երեխաները առանց այն էլ ամեն օր հսկայական քանակության տնային առաջադրանքներ են ստանում, և չարժե ավելի ծանրաբեռնել նրանց: Բայց փորձը ցույց է տալիս որ պատասխանատվության ձևավորման թիվ մեկ մեթոդը աշխատանքի հանդեպ սիրո ձևավորումն է: Բայց փաստ է, որ տնային գործեր անող երեխաները սովորաբար ավելի լավ են սովորում դպրոցում, քանի որ նման գործեր անելով՝ նրանք սովորում են իրենց վրա պատասխանատվություն վերցնել ու մինչև վերջ կատարել հանձնարարությունը: Բացի այդ, ինչպես նշվում է վերոհիշյալ գրքում, «եթե ծնողը երեխային չի խրախուսում մասնակցել տան գործերին, երբ նա դեռ փոքր է և ունի այդպիսի ձգտում, դրանով նրան այն միտքն է ներշնչում, թե օգնելը այդքան էլ կարևոր չէ.... Նաև երեխան սկսում է մտածել, որ միշտ ուրիշները պետք է ամեն ինչ անեն իր փոխարեն» (Parenting Without Borders): Ինչպես երևում է այս մեջբերումից, տնային գործեր անելով՝ երեխաները սովորում են, որ չպետք է լինեն միայն «սպառողի» դերում, այլ պետք է իրենց «ներդրումն» ունենան ընտանիքում ու պետք է նաև տվող լինեն, ոչ թե միշտ ստացող: Տնային գործեր անելը երեխաներին օգնում է հասկանալ, որ իրենք ընտանիքի լիարժեք անդամ են և

պարտավորություններ ունեն ընտանիքի հանդեպ:

Այն երեխաները, որոնց սովորեցնում են լինել պատասխանատու անհատներ, հետագայում, դառնալով չափահաս, կարողանում են ավելի լավ տնօրինել իրենց կյանքը

§2 Պատասխանատվության դրսևորումը «Հացը» պատմվածքում

Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի մայրենի լեզվի դասագրքում՝ «Ես եւ իմ ընտանիքը» խորագիրը կրող բաժնում զետեղված է Հրանտ Մաթեւոսյանի «Հացը» պատմվածքը [3, էջ 59]:

Նախքան բուն թեմային անցնելը սահիկաշարի օգնությամբ փոքրիկ ակնարկ եմ անում հացի մասին՝ նշելով, որ այն հայերիս մեջ նվիրագործվել է, սրբացել և դարձել պաշտամունքի առարկա: Մենք՝ հայերս, ընդհանրապես հացապաշտ, հացի հարգն իմացող ժողովուրդ ենք: «Հացը սուրբ է», «Էս սուրբ հացը վկա», «Հացն ու գինին՝ Տեր կենդանին» կրոնական հիմք ունեցող արտահայտությունները հացը սրբացնելու լուռ վկաներն են: Դեռահաս երեխայի արժեհամակարգը ձևավորելու լավագույն օրինակ է պատմվածքի փոքրիկ հերոսը, որին հանձնարարված էր կատարել աշխատանք, բայց փոքրիկ հերոսի մեջ բավարար կամային հատկություններ չգտնվեցին պատասխանատվություն դրսևորելու և գործն ավարտին հասցնելու համար: Երբ երեխան սխալ բան է անում, օրինակ՝ պատահմամբ փչացնում է ինչ-որ մեկի գույքը, մի՞ փորձեք

	իսկույն ամեն ինչ կոծկել: Երեխաները կարող են անձամբ պատասխանատվություն կրել իրենց արարքի համար՝ տվյալ դեպքում, օրինակ, ներողություն խնդրելով կամ գուցե նույնիսկ փոխհատուցելով պատճառած վնասը: Իրենց սխալների համար պատասխանատվություն կրելով՝ երեխաները կսովորեն՝ • լինել ազնիվ և ընդունել իրենց սխալը • մեղքը չգցել ուրիշների վրա • արդարացումներ չբերել • ներողություն խնդրել, երբ տեղին է Այն երեխաները, որոնց սովորեցնում են լինել պատասխանատու անհատներ, հետագայում, դառնալով չափահաս, կարողանում են ավելի լավ տնօրինել իրենց կյանքը: Պատմվածքի ամենակարևոր և խոր իմաստն այն է, որ յուրաքանչյուրը, անկախ տարիքից, պետք է աշխատի հացին արժանի լինելու համար: Աշխատանք կատարելու համար անհրաժեշտ է ունենալ կամք, իսկ այդ կամային հատկությունը երեխայի մեջ պետք է ձևավորել վաղ տարիքից: Պատասխանատվություն շրջապատի, ծնողների և ինքն իր նկատմամբ: «Հացը» պատմվածքի փոքրիկ հերոսը հասկանում էր, որ ծնողներն անում էին ամեն ինչ իր համար: Այն խոզերը, որոնց գտնելու համար ինքը ծուլացավ Պարզ բացատ գնալ, էլի իր համար էին: Դրանց միսը ամբողջ ձմեռ ինքը պետք է ուտեր, դրանց գնով ինքը պետք է տաք վերարկու հագներ, ունենար դահուկներ, դահուկային կոշիկներ, փափուկ վզնոց, ականջակալ գլխարկ: Ծնողները հպարտ էին իրենց զավակով և թաքուն հրճվում էին, որ

	իրենց որդին մեծանում է գիրք կարդալով: Հպարտությամբ լսում էին ուսուցիչների գովեստի խոսքերը իրենց խելացի տղայի մասին: Նա ոչ միայն դասերն էր լավ սովորում, այլև հետաքրքրվում էր հայ մեծանուն մարդկանցով, գիտեր ով էր Կոմիտասը և այդ մասին տեղեկություններ էր հաղորդում հորը: Պատմության փոքրիկ հերոսը չուներ կյանքում ամենաարժեքավորը՝ պատասխանատվություն, իր ծնողի և իր «հացի» հանդեպ: «Այդ բոլորը տխուր ու գեղեցիկ էին և ստեղծված էին ինձ համար, բայց ես արժանի չէի դրանք ուտելու, դրանք զգալու, դրանց նայելու, դրանք լսելու: — Ես հաց չեմ ուտում,— ասացի ես, մտա անկողին և շուռ եկա դեպի պատը: Եվ բրդի ու փետուրի փափկությո՜ւնն էր ափսոս, և անկողնի ճերմակ մաքրությո՜ւնը»:
Հետազոտության ընթացքը	Հետազոտությունն իրականացրել եմ միջին դպրոցի 6–րդ դասարանի սովորողներ հետ, որտեղ սովորում է 29 աշակերտ: Փորձել եմ հետազոտության առարկայի՝ Հ.Մաթևոսյանի «Հացը» պատմվածքի միջոցով փոքրիկ հերոսի օրինակով վեր հանել մեր առջև դրված խնդիրները: Մինչ բուն նյութին անցնելը սովորողներին տվեցի հայտորոշիչ թեստ, որը հնարավորություն տվեց բացահայտելու սովորողների կարիքներն ու դժվարությունները՝ հետագա աշխատանքը ավեի ճիշտ և արդյունավետ իրականացնելու համար: Հայտորոշիչ թեստը կազմված է երեք հարցից,

ունի բարդության ցածր աստիճան և հատակցվում է երեք րոպե ժամանակ:

Հայտորոշում

1. Օգնու՞մ ես ծնողներիդ աշխատանքում:
2. Ունե՞ս պարտականություն ընտանիքում:
3. Քեզ պատասխանատու մարդ համարու՞մ ես:

Հայտորոշիչ թեստից հետո սահիկաշարի օգնությամբ փոքրիկ ակնարկ եմ արել Հացի մասին՝ նշելով, որ այն հայերիս մեջ սրբացվել է և դարձել պաշտամունքի առարկա: Դեռահաս երեխայի արժեհամակարգի ձևավորման համար լավագույն օրինակ է պատմվածքի հերոսը: Ընդհանուր տեղեկություններ հաղորդելուց հետո սկսեցի կարդալ պատմվածքը: Պատմվածքը ընթերցելուց հետո օգտագործեցի քառաբաժան մեթոդը ի՞նչ տեսա, ի՞նչ լսեցի, ի՞նչ զգացի, ի՞նչ իմացա: Պատմվածքի խորքային իմաստը այն է, որ յուրաքանչյուրը անկախ տարիքից պետք է աշխատի հացին արժանանալու համար, իսկ աշխատանք կատարելու համար պետք է ունենալ կամք, եռանդ, պատասխանատվություն, ցանկություն:

	Ձևավորելով աշխատանքի նկատմամբ ձգտում և սեր՝ նրանց մոտ կզարգանա նաև պատասխանատվության զգացումը: Նյութի ուսումնասիրությունը շարունակվեց նաև հաջորդ դասին: ➢ I-Խումբը անվանեցինք «մեղադրողներ» ➢ II-Խումբը անվանեցինք «պաշտպանողներ» Խմբերը բաժանելուց հետո մշակեցինք հետևյալ կանոնները. 1. Միմյանց ցույց տրվող աջակցություն 2. Աշխատանքի ծանրաբեռնվածության արդարացված բաշխում 3. Թիմի ներսում հաղորդակցությունև փոխգործակցություն 4. Թիմի ներսում ճիշտ գործընթացներ 5. Թիմում պետք է տիրի վստահության մթնոլորտ Ըստ առաջին խմբի՝ տղան ալարկոտ էր: Հենց պատմվածքի սկզբից նա գիտեր, որ իրենց խոզերը կորել են, իսկ ինքը ծուլանում էր գնալ փնտրելու և տալիս էր ալարկոտի հարցեր: Տղան նաև եսասեր էր, նա մտածում էր մենակ իր մասին: Ցախ հավաքելը, փայտ կոտրելը. խոզերին փնտրելը իր պարտականությունը չէր: «Հավերի հարցը մայրիկին է վերաբերում, թող մայրիկն էլ ստուգի՝ ուրուրը հավ թռցրել է, թե չի թռցրել: Աշխարհագրության իմ դասը գիտեմ, պատմության իմ դասը գիտեմ, մաթեմատիկայի իմ խնդիրը…».* իր գործը միայն դաս սովորելն

	ու գիրք կարդալն է: Նա կարդում էր քաջագործությունների մասին գիրքը. «Քանի որ լավ է, շատ լավ է, երբ գրքերի մեջ ուրիշները գնում են, թրջվում են, մրսում են, կռվում են, պարտվում են, հաղթում են, և վատ է, անչափ վատ է, երբ ես ինքս եմ գնալու, հոգնելու, գտնելու կամ չգտնելու մեր խոզերը»: Երկրորդ խումբը կարծում էր որ տղան խելացի է, դպրոցում լավ է սովորում ,հետաքրքրասեր է և նորանոր բաներ սովորելու համար գրքեր էր կարդում: Ծնողները հպարտանում էին իրենց զավակով, հրճվում որ իրենց որդին գիրք է կարդում և գիտի օրինակ Կոմիտասի մասին: Տղան նաև շատ հասկացող էր, նա հասկանում էր որ ծնողները շատ ծանրաբեռնված էին, բայց և ունեին անհետաձգելի գործեր «Գոմը պետք է անպայման սարքվեր, ձյուներից առաջ պետք է կարտոֆիլը անպայման հավաքվեր, խոտը պետք է անպայման դիզվեր, ուրեմն հայրիկը, մայրիկը, հորեղբայրը չէին կարող չգնալ ձմեռվանից ատաջ գոմը սարքելու, կարտոֆիլը հավաքելու, խոտը դիզելու»: Հասկանում էր, որ ընտանքիում մենակ ինքն էր ազատ, հասկանում էր նույնիսկ այն, որ ստում էր և գիտակցում իր ճիշտ չլինելը. «Ես հասկացա, որ աշնան մեղմ արևի մեջ ամեն ինչ թախծոտ ու գեղեցիկ է և միակ տգեղը ես եմ, որովհետև ձևացնում եմ, թե գրքի պատճառով չէի ուզում մեր խոզերը փնտրելու գնալ»: Տղան հասկանում էր որ ծնողները ամեն բան անում են իր համար: Ամփոփելով խմբային աշխատանքը վեր հանեցինք թե ի՞նչն էր խանգարում տղային, ինչու՞ ստեց ծնողներին: Խմբային աշխատանքի ամփոփիչ հատվածում դուրս

բերեցինք պատասխանատվություն կարողունակությունը, որը կարող էր լինել կամուրջ ալարկոտ, բայց խելացի տղայի հատկանիշների մեջ: Ամփոփեցինք որ տղայի մոտ չկար պատասխանատվություն դեպի աշխատանքը, ընտանիքը: Վերջում կրկնեցինք հայտորոշիչ թեստը, որի արդյունքները եկան փաստելու որ Հ. Մաթևոսյանի «Հացը» պատմածքը բարձրացրեց սովորողների պատասխանատվությունը:

Այս ամենի արդյունքում մենք հասանք մեր բուն վերջնարդյունքին՝ վերլուծելով հերոսի պատմվածքի ընթացքում ենթարկված փոփոխություններին: Սեփական ներաշխարհի դիտարկման միջոցով կատարելով ինքնավերլուծություն՝ գտավ իր վարքագծի պատճառը:

Վերջնարդյունք

Ցճ - 15%

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հետազոտությունը տվեց իր արդյունքները: Իմ դիտումը պարզեց, որ աշակերտները, օգտվելով տարբեր հնարներից, մեթոդներից եկան վերջնական եզրահանգման: Պատասխանատվությունը կարևորագույն արժեք է մարդ– քաղաքացի ձևավորման համար: Այս հետազոտությունը կատարելիս ծանոթացա սովորողների առաջադիմությունը խթանող մի շարք հնարների: Այդ հնարները ոչ միայն զարգացնում են սովորողների գրավոր և բանավոր խոսքը, այլ նաև որոշակի կարողունակություն՝ ինքնաճանաչողական, սոցիալական, պատասխանատվության՝ պատվի և արժանապատվության գիտակցումը:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

1. Ալեքսանյան Թ., Հրանտ Մաթևոսյանի «Հացը» պատմվածքի ուսուցումը. Մաթևոսյանական գիտաժողովի նյութեր ժողովածու, Հայ-ռուսական համալսարան, 2010 և 2015:
2. Գյուրջինյան և ուրիշներ, Մայրենի 6, Եր., Էդիթ պրինտ, 2019:
3. Ծնողավարություն առանց սահմանների/ Parenting Without Borders
4. ԿԶՆԱԿ հիմնադրամի նյութեր. https://lib.armedu.am/category/56
5. Հանրակրթության պետական չափորոշիչ, հաստատված 2021 թ. փետրվարին http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149788